

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Փառք ի բարձունս Աստծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Այսօր երկինք և երկիր միանում են հրեշտակների երգովը աննման, որ ավետում է աշխարհին ծնունդը Որդվոյն Աստուծո, Փրկիչը ապգի մարդկան:

Այսօր հուսով լի սրտերը բոլոր մարդկանց, բոլոր ժողովուրդների դեպի երկինք են բարձրացնում իրենց աղոթքները թնկսբույր, աղերսելով երկնքից, որ «խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան» աստգամը փրկարար լուսավորի կրանքի հորիզոնը մեր օրերի ուղեկորույս մարդկության, և ապգերը բոլոր գրտնեն իրավ ճանապարհը հաշտաշխ ու արդար գոյակցության, որ դարավոր երապանքն է նաև մեր Մայր Եկեղեցու և քանի՞-քանի անգամ եղեռն տեսած մեր ժողովրդի:

Այս աղոթքով ու այս սուրբ սպասումներով ոգեշնչված, ողջունում ենք Նոր տարին և ավետում Ձեզ՝ հրաշալի ծնունդը «խաղաղութեան իշխան» Փրկչին մեր Քրիստոսի, սաղթելով Ձեզ, Սուրբ Աթոռիդ միաբանությանը, թեմական-եկեղեցական վարչական մարմիններին և համայն ձեր հավատացյալ ժողովրդին, կենաց արևոտ ու խաղաղ բազում տարիներ ու եկեղեցաշեն հոգեշահ իրագործումներ, բերելով բոլորին տիրավանդ կենարար օրհնություններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Եղբայրական սիրո ողջույններով՝

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով լեղուն բալմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց վանական կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորակնների համար: